

Հախօսութեամբը արդարութեան գա-  
տը վաստրկեցաւ , բայց զինքը ընտրող-  
ներուն դիմացը իր յարգը կորսընցուց .  
որոնք 1847ին զինքը նորէն նուիրակ  
ընտրեցին : Հինգ տարի վերջը լատիմ-  
պըրկ քաղաքը շատ ազնուականութե-  
իր առջի ըրած սիսալը սրբագրեց , միա-  
բան հաւանութեամբ մեր գերազանց  
քաղաքագէտը նորէն նուիրակ ընտրեց ,  
և ընտրութեանը համար եղած սովո-  
րական ծախքերն ալ քաղաքը ինքը վը-  
ճարեց : Ակայն ալ Աքաօլէին ան-  
կարելի էր Կյորհըրդարանին վիճաքա-  
նութեանցը մասնակից ըլլալիր նեղա-  
ցուցիչ հիւանդութեանը պատճառաւ .  
անոր համար Ինգղիոյ թագուհին ու-  
ղեց զինքը արժանապէս վարձատրել ու  
ասկէց երկու տարի առաջ Ինգղիոյ ա-  
տենակալ անուանեց :

Ըստ ատենէ 'ի վեր Լօրտ Աք-  
աօլէ միտքը դրած էր Ինգղիոյ պատ-  
մութիւն մը գրելու 1688ին Քեղափո-  
խութենէն սկսելով : Խնչպէս որ վերը  
ըսինք 1847ին նուիրակ ընտրուելով ,  
հանգիստ ատեն ունեցաւ աս գործքիս  
պարապէլու . առջի երկու հատորը  
1848ին հրատարակեց ու 1855ին ուրիշ  
երկու հատոր ալ . հինգերորդն ալ ծա-  
նուցուած էր , երբ մահը եկաւ յան-  
կարծ անուանի պատմագրին զրիջը փըշ-  
քեց : Ինգղիոյ մէջ գեռ ամէն մարդ կը  
յիշէ աս զբքին փրկաւէտ ազգեցու-  
թիւնը՝ երբ առջի անգամ 1848ին Կաղ-  
ղիոյ Քեղափոխութեան միջոց դուրս  
ելաւ . ան ատեն Ինգղիոյ մէջ ալ ոգի-  
ները կ'եփէին , բայց տեսնալով աս գըր-  
քիս մէջ , որ անգղիական ազատութիւ-  
նը ինչպիսի հաստատուն խարսխի վրայ  
հիմնած է , ոգիներու մեծ հանգար-  
տութիւն եղաւ : Ակայն ըստ մատե-  
նագրական տեսութեան նոյն ատեն  
շատ պարսաւ ու շատ ալ գովիւստ տուող-  
ներ եղան աս գործքիս : Ի՞նանց երկայն  
բարակ բիւրաւոր դատաստաններու ա-  
նել լաբիւրինթուին մէջ մտնելու , անա-  
շառ քննադատից կարծիքը հոս կը բե-  
րենք , որոնք կ'ուղէին աս պատմու-  
թեանս մէջ ուղղափառաց համար աւե-

լի անկողմնասիրութիւն տեսնել , ինչ-  
պէս որ Լօրտ Աքաօլէն ինքը ազնուա-  
կան կերպով նոյն անկողմնասիրութիւ-  
նը ցըցուցած էր Կյորհըրդարանին մէջ ,  
նուազ ատելութիւն իր քաղաքական  
հակառակորդացը գէմ , քիչ նախան-  
ձայուղութիւն իր կողմին համար , պա-  
կաս երևակայականնկարագիրներ պատ-  
մական անձանց ու աւելի Ճմարիտ պատ-  
մական ոճ : Լոյսու ամենայնիւ աս  
գործքը միշտ պիտի մնայ իբրև զարմա-  
նալի ծնունդ զարմանալի հանձարի մը ,  
որուն բեղմնաւորութիւնը գիտութեա-  
նը կը հաւասարէր , որուն ոճը՝ պայծառ  
ու որոշ մտածութիւն մը լուսոյ Ճառա-  
գայթի պէս հրաշալի կերպով կ'անդրա-  
դարձնէր : Կարելի է որ մէկը Լօրտ  
Աքաօլէին կարծիքէն չըլլայ , բայց  
անկարելի է որ իրեն մտածածը իրմէ  
աղէկ բայցատրէ : Այն արուեստագի-  
տի սկսած արձանն է , որուն գժբաղդա-  
բար թոյլչտրուեցաւ իր մտաց ծնունդը  
ամբողջապէս գործադրել . յետինք աս  
պատմութեան հատուածը պիտի պա-  
հեն , ինչպէս զգուշութեամբ կը պա-  
հենք նախնեաց քանդակներուն անգին  
բեկորները :

Ինգղիան ալ Լօրտ Աքաօլէին ա-  
ճիւնը նոյն սիրով ու նոյն մեծարանօք  
պիտի պահէ իր մեծ մարդկանց Արբա-  
րանին մէջ Աւէսդմինսդրի Աքայա-  
րանը՝ Աղէֆէնսընի <sup>1</sup> քով Կելսընին  
մահարձանէն ոչ շատ հեռու :

**Առանց ուղեղոց որդիշի բան սորվե-  
ցընել :**

Դան քաղքին դրան մօտերը , գէպ 'ի  
Վիւլչուզ տանող Ճամբուն վրայ պղտի  
տուն մը կայ , որուն գետնայարկը կար-  
ծես թէ վարձուորի մը բնակարան է ,  
իսկ վերնայարկը քաղաքացի ընտանեաց  
մը բնակութեան չնորհք ունի : Կետ-  
նայարկ ըսածնիս ուրիշ բան չէ եթէ

<sup>1</sup> Անգղիացի երևելի Ճարտարապէտ ու մեքե-  
նագէտ . ծն . 1781 . Մ . 1848 :

ոչ բակ մը , ուր որ խել մը հաւեր ասդին անդին կտցելով իրենց կեր կը բնտուեն . անդին յարդի բարդ մը որուն դեռ ձեռք դպցուած չէ , քոնին ալ պզտի սայլ մը , որուն ձին նոր նորանց արձրկուած էր . իսկ վերնայարկին մէջ կը տեսնուին ձեր մակ վարագոյներով զարդարուած պատու հաններ , դիմացը պարտէզ մը՝ նկարակերպ հովանոցներով , և երկաթէ վանդակով պատած եօթնաստիճան պատըշգամմը :

Այս պատշգամին մէջ նստած է տանտէրը Հակովը Իներու , որուն արտաքին տեսքը՝ տանը ամենէն մեծ զարդն էր : Որան գործաւորի բաժկոն մը առած , գլուխը թաւիչէ գտակ մը , ոտքը կալուածատիրով հողաթափներ , բերանն ալ տեսակ մը կարծ ծիսանելի :

Հոն կեցած իր որդւոյն՝ Վտեփանոսին գալուն կը սալասէր , որ իր նշանուածին հետ մէկտեղ Վիւլչուգ գացեր էր , հարսանեկան ընծայներն գնելու համար . մէկ կողմանէ ացքը ճամբուն վըրայ , մէկալ կողմանէ ըլլալու հարսնիքին վրայ կը մտածէր , որով Վտեփանուածը միշտ իր քովը պիտի մնար և իր ծերութեանը քաղցր նեցուկ մը պիտի ըլլար :

Հազմոցաւոր կառքի մը շառացիւնը վերջապէս սթափեց զինքը այն գորովաշարժ մտածութենէն որուն մէջ առանց իմանալու կամաց կամաց ընկղմեր էր , և Ճանցաւ եկողներուն ով ըլլալը , որոնք կառքին ու ձիուն հանած փոշիին մէջ թաղուեր էին :

Երբոր տանը դիմացի բակին մէջ կառքը կեցուցին , Իներու իրենց ընդառաջ ելաւ , որոնք ուրախութեան ձայներով՝ զինքը ողջունեցին : Հակողներն էին Որէն խաթունն ու իր աղջիկը , և Վտեփանոս , որ ծրարներուն ու կապոցներուն ետեւը կեցած բոլորովին ծածկուեր էր :

Բարի իրիկուն , հայրիկ , պոռաց լուիզան , սիրալիր գորովանօք մը նոյն վայրկենէն տալով այն անունը , զոր քանի մը օրէն իրաւամք պիտի զուրցէր :

— Ինարի տեսանք , աղջիկս՝ պատաս-

խանեց Իներու , ձեռքերը աղջկան երկնցընելով որ կառքէն զինքը վար իջեցընէ , ու մօրը դառնալով՝ բարի տեսանք Որէն խաթուն , ըսաւ : Ինայց տէր Վտուած . զուք այդ կառքը կատարեալ վաճառականի սայլ մը դարձուցեր էք :

— Հապա . բայց գեռ այս բան մը չէ , ըսաւ Որէն խաթունը : Թէ՞ որ տղուգ մնար , բոլը կրպակները կը պարպէր :

Իներու ժամելով , ձեռքովը կսմիտ մը տուաւ Վտեփանոսին , որ վար իջեր էր՝ գաւթին մեծ դուռը բանալու և կառքը ներս մոցընելու համար :

— Հասկըցայ , հասկըցայ , ըսաւ . բնական է որ մարդ կ'ուզէ իր սիրելին ամենայն կերպով զարդարել . և թէ որ ձեռքէն գայ , զինքը կերպաներու վըրայ կը քալեցընէ . աս տեսակ բաներու մէջ պէտք չէ հակառակիլ երիտասարդաց աշխուժին :

— Իրաւունք ունիս , այնպէս է , վըրայ բերաւ Որէն խաթունը . բայց պէտք չէ ալ որ այդ հաճոյքը իրենց կործանմանը պատճառ ըլլայ :

Իներու ուսերը շարժելով . “ Ի՞նչ , միթէ տղաս ստակ չունի , ըսաւ . ես իրեն համար առանձին ալ պահէր եմ . թող ինչ որ ալ իր աշխատութեամբը կրնայ վաստըկիլ . և որովհետեւ հիմա այն ստակին տէրն է , կ'ուզեմ որ բանի գործի ետեւէ ըլլայ , որուն վրայ չեմ տարակուսիր . աշխատութեան կողմանէ ինծմէ վար չմնար :

— Վտեփանոս , կրկնեց Որէն խաթունը , որ քեզի պէս ալ գթած սիրու մը ունենայ . որովհետեւ , Պարոն Իներու , չեմ մոռցած որ ես ու աղջիկս քեզի ամենայն կերպով երախտապարտ ենք . և առանց այն փոխատութեանը զոր դու ատեն մը տուիր . . . .

— Խնդրեմ , ասոր վրայ չխօսինք , մէկէն վրայ բերաւ Հակովը Իներու , սաստիկ այլայլած կերպով մը . . . . անշուշտ կարօտ էք բերաննիդ քիչ մը բան դնելու . . . Հապա , Ուիզա , եկուր մեզի քու տնտեսութեանդ պատիւները ըրէ . ես անանկ բարակ մարակ քաղա-

քավարութիւններէ շատ չեմ հասկը-  
նար :

Դեռահասակ օրիորդը որ Ատեփա-  
նոսին քով կեցած, ձին արձըկելու հա-  
մար իրեն կ'օդնէր, մէկէն վազեց ու  
առջևնէն անցնելով ձաշատունը մտաւ :

Ըստով մը սեղանատախտակը մէջ  
տեղ քաշեց և ամէն բան անանկ արա-  
գութեամբ մը պատրաստեց՝ որով կ'ի-  
մացընէր թէ տունը իրեն անծանօթ  
չէ : Վանի մը վայրիենի մէջ սեղանը  
պատրաստուեցաւ : Իսկ Ատեփանոս,  
մէկէն կառքն ու ձին իրենց կայանը  
տեղաւորեց ու հօրը քով եկաւ նստաւ,  
որ իր պատրաստականութիւնը տեսնե-  
լով սկսաւ զինքը գովիճ հետը կատակ  
ընելով :

Արջը ծրարները բանալով, որ տես-  
նեն հարսնացուին համար գնուած բա-  
ները, ներկային համար կարգադրու-  
թիւններ ու ապագային համար այլ և  
այլ որոշմունքներ ըրին, և երբոր սե-  
ղանը լմբնցաւ, Բերու ու Որէն խա-  
թունը անկիւն մը քաշուած սկսան ա-  
պագայ ընելիքներնուն վրայ խօսիլ :

Յակոբ սահմանեց իր որդուցն թող-  
լու անտառահատութենէ ու երկիրնե-  
րէն եկած շահէն զատ, նաև բոլոր առ-  
նելիք պարտքերը : Իսկ Որէն խաթու-  
նը որոշեց տուն մը տալ հանդերձ կահ-  
կարասիքով, և քսան հազար ֆրանգ  
որ հարսնեաց օրը պիտի վճարէր :  
Պարոն Բերու ամենեխն չէր յուսար որ  
այսչափ բան կարենայ տալ, և որուն  
վրայ ունեցած մեծ զարմանքը յայտնեց  
Որէն խաթունին, ու խօսքը առաջ  
տանելով,

— Համանաքդ ալ գիտես, ըստաւ, որ  
վիրենք լաւ վիճակի մէջ տեսնելու ինծի  
մեծ ուրախութիւն է . նոր գերգաստանի  
մը ապագան թշուառութեն վտանգի մէջ  
դնելը, բնութեան կարգին դէմբան է :  
Ի՞սկ առ ալ պէտք չէ մոռնալ որ որչափ  
ալ պէտք է որ իրենց ապագայ վիճակը  
ապահովցընենք, բայց և ոչ ալ անանկ  
մը ընելու է որ իրենց երջանկութիւնը  
ծերութիւններնուս ատեն մեր թշուա-  
ռութեանը պատճառ ըլլայ : Իս տղուս

օժիտ տալու ժամանակս մտածեցի որ  
ինծի համար այնչափ բան պահէմ որ  
կարենամ հանգիստ ապրիլ . և չեմ ու-  
զեր որ դու ալ աղջկանս օժիտ տամը-  
սելով, զհրամանքդ վերջը կարօտու-  
թեան մէջ ձգես :

— Ամենեւին մի վախնար, ըստա ժըսկ-  
աելով Որէն խաթունը, լաւագոյն մա-  
սը ինծի պահէցի : Բաց ՚ի ուրիշ քսան  
հազար ֆրանգէ մը, առուտուրէն ե-  
կած վաստակն ալ իմ ձեռքս է, որ շատ  
աւելի շահ կը բերէ :

— Հո, հո, պոռաց Յակովը զար-  
մացմամբ . չէի կարծէր որ տղաս ասանկ  
հարուստ օժիտով մը կարգեմ : Բայց  
գիտես, Որէն խաթուն, որ աս բանս  
մեր շահուն վնասակար է :

— (Գ) գտակար ըսէ մանաւանդ, կըրկ-  
նեց պառաւը :

Յակովը ուզեց խօսքը կարել . բայց  
անիկայ աւելի ձայնը բարձրացընելով,  
Ո՛հ, աս բանս չես կրնար ժիստել, ը-  
ստա . միթէ երկաթի ու փայտի վաճա-  
ռականութեամբ չէ որ այսչափ բան  
վաստըկեցայ . և այս վաճառականու-  
թեան յաջողելուն ոչ ապաքէն քու մե-  
զի շինած տունդ պատճառ եղաւ :

— Տուն շինելը՝ իբրև գործավար՝  
մեր արուեստն է, ըստա Յակովը :

— Բայց ձեր արուեստն է նաև,  
կրկնեց խաթունը, որ որոշուած օրը  
ստակը պահանջեք . և երբոր երիկս  
մեռաւ, առանց իր պարտքերը հատու-  
ցանելու, հրամանքդ կարող էիր զիս  
տնէն վանտել ու հրամանքիդ սեպհա-  
կանել :

— Լամբ ունէի այնպէս ընելու, ը-  
ստա Յակովը անտարբեր կերպով մը :

— Բայց հրամանքիդ գթութիւնը  
արգիլեց զքեզ որ զայն ՚ի գործ չդնես,  
կրկնեց Որէն խաթունը :

Բերու, որ տհաճ կ'երեար, փուճ  
տեղը ջանաց խօսակցութիւնը կտրել .  
պառաւը միշտ կ'ուզէր հաստատել որ  
չէր մոռցած իր բարեգործութիւնը, և  
միակերպ իր ըրած վեհանձն գործողու-  
թիւնը առաջ կը բերէր, ըսելով որ ե-  
թէ ինքը չհաւանէր պարտքին վճար-

մանը ուշանալուն , որով իր առնելիքը վտանգի մէջ թողուց , ինքը այս օրուան օրս բան մ'ալ ձեռքը չէր ունենար ու թշուառութեան մէջ կը մաշէր . որով քու գթութիւնդ պատճառ եղաւ կ'ըսէր որ հիմա ես ասանկ երջանիկ վիշակ մը ունեցայ , և կրցայ այս երկու երիտասարդաց բարօրութիւնը հայթայթել :

Ստեփանոսն ու Առիզան լսելով իրենց ուժով ուժով խօսելուն ձայնը , որ երթալով կը բարձրանար , իրենք ալ մասնակից եղան այն երախտագիտութենէ առաջ եկած խօսակցութեանց . բայց Իներուին այլայլութիւնը աւելի սաստկանալով , սաստիկ կերպով պատուիրեց որ լուն ու ան բանին վրայ չխօսին :

— Ի՞ան չկայ , մինեղանար , հայրիկ , ըսաւ Առիզան , ձեռքերը ուսին վրայ դնելով . ալ ասկէ վերջը քեզի չնորհակալ չենք ըլլար , չենք յայտներ երախտագիտութիւննիս , և չենք հաւտար որ դուն լաւ սիրտ ունիս :

— Իրաւունք ալ ունիք , պոռաց Քակովը . ձանձրացայ գովեստ լսելէն անանկ լաւութեան մը համար ուսկից զուրկ եմ բնաւ :

— Ի՞նչալու :

— Ա ասն զի ես այդ բանը ներքին ազգեցութենէ շարժեալ ըրի , հապաղիտուածով մը եղաւ . . . և ահաւասիկ ասոր համար Առին խաթունին գովասանիներն ու ձեր մեծարանքը ինծի գէշ կու գան . . . Պէտք է ուրեմն որ վերջապէս ճշմարտութիւնը իմանաք և իմ վրաս ունեցած համարմունքնիդ ալ չափաւորուի , որով և երիտասարդաց խրատ մը ըլլայ :

Երկու նշանուածները զարմացմամբ իրարու երես նայելով , գացին իր երկու կողմը նստան , մինչդեռ ինքը ծխանելին վառելու հետ էր . իսկ Առին խաթունը Քակորին ըսածին չհաւատալով , անանկ կերպով մը երեսը նայեցաւ որ կարծես թէ կ'ուզէր բան մը ըսել : Իսկ Քակոր քիչ մը ատեն մտայոյդ կենալէն ետե , վերջապէս ասանկ ըսաւ .

— Ինչպէս որ ըսիր , Ա որէն խաթուն , այն միջոցին որ նսրակերտ տանը չէնքը լմբնցած , փայտակերտ կազմածքները դուրս կը հանէինք , մէյ մ'ալ էր կանդ մահը վրայ հասաւ , որ իր բաները անանկ խառնախմբոր վիճակի մէջ ձգեր էր , որ եթէ հարկ ըլլար տանը համար եղած ծախքը մէկէն պահանջել , տարակոյս չկայ որ երկանէդ մնացած ժամանակութեամբ միմ իրաւունքս ցուցընէի ու այնպէս բանին ձեռք զարնէի , թէպէտ և զիտէի որ ձեր թշուառութեանը պատճառ պիտի ըլլար : Հրամանքդ իմիրաւունքս չժխտեցիր , և իմացուցիր ինծի թէ ինչ կերպով կընայիր բոլոր պարտքդ վճարել . բայց ասոր համար հարկ էր տունը քու ձեռքդ թողուլ , ուր վաճառքներդ կային . քու վաստըկելուդ սպասել ու զիտէ որչափ ատեն , որով առնելիքս վտանգի մէջ կ'ինար , զիտնալով որ առուտուրի մէջ մարդ միայն իր ձեռքի ունեցածին վրայ կընայ վստահ ըլլալ : Այսպէսով առնելիքս ապահովցընելու ինքզինքս վտանգի մէջ դրած կ'ըլլայի : Դուն պըզտի աղջկիդ ցուցընելով , որ օրօրոցին մէջ կը քնանար , և ացքերդ արցունքով լեցուած աղացեցիր որ զինքը մուրալու վիճակի չձգեմ . բայց ես առանց նայելու ելայ գացի , միտքս հաստատ դնելով որ առնելիքս ապահովցընեմ : Իշխան որ ասոր համար զուն ու աղջկիդ երեսի վրայ ալ մնալու ըլլային յանցանքը իմն չէր , հապա պարագայներուն որ այնպէս կը պահանջէին . համառօտ ըսեմ , ունեցած իրաւունքս ՚ի գործ պիտի դնէի . և աս բառս իբրև առակաւոր խօսք մը գարձուցած , իրաւունքս է , իրաւունքս է ըսելով ելեր կ'երթայի . և երբոր կը մտածէի որ աս ըրածս արդեօք արդարութիւն է , ինքզինքս կը հանդարտէի , առանց մտածելու թէ ասով ուրիշի թշուառութեան պատճառ պիտի ըլլամ :

Դարձեալ թէ որ դուն , խաթուն , աղջիկ մը ունէիր կերտակրելու համար , ևս ալ տղաս պիտի հոգայի , որն որ վեց շաբթէ ՚ի վեր մահուան դուռը հասած հիւանդ պառկեր էր , որով բոլոր խելքս միտքս իրեն վրան էր : Հիմա խիստ աղէկ վրայ դրած է , բայց նոյն միջոցին խարխըլիած հիւղի մը նման ամէն քամիէ կը գողար : Ի՞մէն զինքը տեսնողը կ'ըսէր . “ Խեղած աղայ „ . և իմ սիրտս կտոր կտոր կ'ըլլար : Հիւանդութեան միջոց զինքը նայող բժիշկը խմացաւ որ կուրծքի տկարութիւն էր ունեցածը , և յանձնեց որ ցրտէն ու խոնաւութենէ զգուշացընեմ , ծանուցանելով որ եթէ մէջմըն ալ հիւանդութիւնը կրկնելու ըլլայ , անտարակոյս զինքը կը տանի : Ի՞նոր համար , վանդակի մէջ դրած թուչունի մը պէս զինքը կը հոգայի , միշտ ինծի հետ տնէն դուրս կը հանէի , ան ալ որոշեալ միջոցներ , ու ամենաթեթե զովութենէ , քամիէ ու արևէ զինքը զգուշացընելով :

Ինչպէս որ ըսի , միտքս հաստատ դըրած էի որ քեզմէ առնելիքիս տեղ տունդ առնեմ , ու մուրհակներս փաստաբանին տանելու համար դէպ 'ի ԱՌիւլհուզ ճամբայ պիտի ելլէի . մէյ մ'ալ տղաս վազեց աղաշելով որ զինքն ալ հետս տանիմ : Արկինքը և ոչ ամպ մը կար , բոլոր թռչունները մացաւներուն մէջ կ'եր գէին , և ինծի ծանրաշափի տեղ ծառայող վեղարաւորը կնքուղը վար առեր էր . որով ամենւին չէի տարակուսէր որ աղուոր օդ մը պիտի ունենանք : Ուստի դրի համէտը իշուն վրայ , և տղաս ալ վրան նստեցուցի , որ իսիստ առողջ ու կայտառ էր ան միջոցին :

Ինչուան քաղաք ամէն բանլաւ գնաց . փաստաբանը առաւ թղթերս , խոստանալով որ մէկէն ետեւէ կ'ըլլայ ձեր ձեռքէն տունը առնել տալ ու վեց ամիսը չանցած ինծի անցընել : Այս խոստմանը վրայ սաստիկ ուրախացած , դուրս ելայ ու տղուս հետ մէկտեղ իշուն վրայ հեծած նորէն ճամբայ ինկայ :

Փաստաբանին քով եղած ժամանակնիս օդը սկսեր էր աւրուիլ քամին ճամ-

բուն վրայի փոշին վեր վար կը ցրուէր , և ահագին ամպեր լեռներէն գալավլ կը զիգուէին : Վհէ մը ատեն կեցայ մուածեցի որ արդեօք քաղաք դառնամ տըղուն համար , բայց անիկայ արդէն յոգնած ու ձանձրացած ըլլալով կ'ուզէր տուն դառնալ : Այս ալ մոտածելով որ փոթորիկը սկսելէն առաջ կրնանք տուն հասնիլ , աւելի ընթացքս երագեցի :

Դաժբաղդաբար՝ էշը միակերպ ընթացք մը առած , աւելի չէր ուզէր առաջ երթալ : Որչափ որ անունը տալով կը կանչէի ու կը մորակէի , ինքն ալ այնչափ անզգայ եղեր էր : Ոտեփանոս զինքը խրախուսելու համար կարկանդակ մը տուաւ , զորն որ զգուշութեամբ ինչուան վերջի փշուրը կերաւ , բայց նոյնպէս իր առջի ընթացքը չփոխեց : Դարկութիւնս շարժեց կենդանւոյն յամառութիւնը , մանաւանդ որ ամպերը վրանիս կը պատէին , թեթև ցուրտ անձրե մըն ալ սկսաւ գալ , որ քամիին սաստկանալովը միակերպ երեսնիս կը զարնէր : Ի՞նչափ առաջ զացեր էինք . որ ետ դառնալը անկարելի էր . վերջն ալ ամպերուն մէջ տեղ լրւսաւոր տեղեր տեսնալով , կը յուսայի որ բոլորվին օդը հանդարտի :

Իսկ Ոտեփանոս ցրտէն նեղուած սկսաւ դողդղալ . անձրեւը կամաց կամաց զգեստներուն մէջ կը թափանցէր . մէյ մըն ալ յանկարծ հազը բռնեց , նոյն հազը որուն համար բժիշկը կը վախնար , և որ տասնըհինգ օր սիրտս կտոր կտոր ըրեր էր : Յուսահատած մացառուտէն Ճիւղ մը կտրեցի ու անով սկըսայ կատաղաբար իշուն զարնել . ասով կարծես թէ աւելի կատղելով սկսաւ ետ ետ երթալ . և երբոր նորէն զարկի , գետին պառկեցաւ :

Այս միջոցին ամպերն ալ աւելի թանձրանալով , անձրեւ սկսաւ հեղեղաբար տեղալ : Ծղաս ցրտէն սահմոկած՝ չէր կրնար խօսիլ , ակռայները իրարու կը զարնէր , հազն ալ աւելի սաստկանալով , ողորմագին ձայնով կը հեծեծէր : Խելքս գլխէս թռաւ ու ինչ ընելիքս չէի գիտէր . առի տղաս գիրկս և առանց

Նայելու՝ սկսայ անձրեին տակ վազելով  
Երթալ։ Ի՞ն միջոցին որ ապաստանա-  
րան մը կը փնտուէի, առանց գիտնալու  
թէ ուր կ'երթամ, մէյմ՝ ալ ձիու և  
պոռալու ձայն մը ականջս հասնելով  
ետիս դարձայ, և տեսայ որ կառք մը  
կեցեր է։

Դերմակ մազերով պարոն մը կառ-  
քին դոնէն դուրս երկրննալով,

“ — Ի՞նչ պատահեցաւ, ուր կը տա-  
նիս այդ տղան, հարցուց։

“ — Ո՞տիկ տուն մը կը բնտոեմ,  
ըսի, որ դարման ընեմ։

“ — Ուրեմն վիրաւորուած է։

“ — Չէ, բայց ցուրտն ու անձրելը  
վրան անանկ հիւանդութիւն մը բերին  
որ ինչուան կրնայ մեռնիլ։

“ — Ո՞չ մը տեմնամ, ըսաւ օտարա-  
կանը աշխոյժ կերպով մը։ Ես բժիշկ  
եմ։ Հոս բեր տղան,,։

Իացաւ կառքին դուռը և առաւ ծըն-  
կին վրայ Ոտեփանոսը որ բոլորովին  
ջուր կտրեր էր։ Երբոր դէմքը տեսաւ  
ու ցաւագին հազար լսեց, չկրցաւ այլ-  
այլութիւնը բռնել։

“ — Ը ուտ, շուտ, ըսաւ քովի նըս-  
տող խաթուներուն, սա թրջած ըզ-  
դեսները վրայէն հանեցէք, ու ձեր  
վերաբկուները տուէք որ վրան պլենք,,։  
Տղուն հեւքը քիչ մը հանդարտեցաւ,  
ու չնշառութիւնը սկսաւ տեղը գալ։ —  
Պիտք է, ըսաւ, զինքը դրսէն ամենայն  
կերպով դարմանենք։ Ուլիրետ, քովի  
գրպանէդ սրուակը հանէ ու ինծի տուր։

Ի՞ս ըսելով, սկսաւ մարմինը սրուա-  
կին մէջի եղած հեղանիւթովը շփել։  
Երբոր տղուն վրայ կէս մը ջերմութիւն  
եկաւ, լաւ մը զինքը պատելէն ետքը,  
Ուլիրետին նշան ըրաւ որ կառքէն վար  
իջնէ, և տղան քովը բարձին վրայ պառ-  
կեցուց։ Վերջը ինծի դարձաւ հարցուց  
թէ արդեօք տնէն շատ հեռու ենք, և  
պատասխանիս համեմատ ըսաւ կառա-  
վարին որ կամաց կամաց ընթացքը շա-  
րունակէ։

Ես կառքին քովիէն երթալով իրեն  
չնորհակալ կ'ըլլայի, և էշը բոլորովին  
մոռցեր էի։ մէյմ՝ ալ տեմնամ որ կառ-

քէն ելլող պատանին առաւ էշը բե-  
րաւ։ Ի՞սպէսով ինչուան Դան գա-  
ցինք։ Ի՞նձրելը անընդհատ հեղեղի  
պէս կու գար, բայց իմամենեին հոգս  
չէր։ աջքս կառքին մէջ պառկած տղուս  
վրայէն չէր զատուէր։ Դյերը կէս մը  
վրան ծռած միշտ ուշադրութեամբ կը  
դիտէր, ամենաթեթև շարժմունքն ալ  
աչքէ շփախցընելով։ Վերջապէս ինծի  
նշան ըրաւ որ ամէն բան լաւ կ'երթայ։  
Ը ունչը ազատ համարձակ սկսաւ առ-  
նել և երեսին վրայ քրտինքի կաթիլ-  
ներ կը տեսնուէին։ Երբոր տուն հա-  
սանք, օտարականը անձամբ տարաւ  
տղան մասնաւոր տաքցուցած անկողնի  
մը վրայ պառկեցուց, որ քանի մը վայր-  
կենէ ետև սկսաւ քուն ըլլալ։

Երբոր կը մտածէի որ ի՞նչ կերպով  
չնորհակալ ըլլամ, մէկէն խօսքս կտրեց,  
ըսելով։

“ — Հիմա ատոնք մէկդի թող, ու  
գնա զգեստներդ փոխէ, և թէ որ կա-  
րելի է, տղուս ալ զգեստ մը տայիր որ  
փոխուի։ ահա կու գայ,,։

Ի՞ն միջոցին պատանին, տղուս թրո-  
ջած զգեստին կապոյը թեին տակը  
զարկած ներս մտաւ։ Ի՞ն ատեն միտքս  
եկաւ որ ձամբան հետս մէկտեղ էր, ո-  
րուն այլայլութեանս միջոց՝ ամենեին  
ուշադրութիւն չէի ըրած։

“ — Տէր Այսուած, ըսի, հապա  
թէ որ յանկարծ պարոնը հիւանդանա-  
լու ըլլայ։

“ — Ինչո՞ւ համար, կրկնեց բժիշկը.  
կտրիճ երիտասարդ է։ չոր զգեստներ  
հագնելով ու քիչ մը կրակի մօտենալով  
ամէն բան կ'անցնի կ'երթայ։

“ — Իայց ինչո՞ւ անձրեին տակ կե-  
ցաւ։

“ — Հապա տղադ ուր կէնար, կըրկ  
նեց ծերը ժամտելով։ և կ'ուզէիր որ ա  
ռողջ մարդը ներսը նստի, ու հիւանդ  
տղադ դուրսը կէնայ։

“ — Եառքը ձերն էր, վրայ բերի  
այլայլած կերպով մը, և թէ որ քու  
տղուդ աւելի խնամք տանելու ալ ըլ-  
լայիր, ով բան կրնար ըսել։ վասն զի  
իրաւունք էր,,.

Շաժիշկը երեսս նայեցաւ , և ձեռքս բռնելով .

“ — Այդպէս մի կարծեր , պարսն ըստա , ընտանի ծանրութեամք մը . ապահով եղիր թէ ուր որ գթութիւն չկայ , հոն բնաւ իրաւունք ալ չկրնար ըլլալ ” :

Ծթողուց ինծի որ պատասխան տամ , և խրկեց որ երթամ՝ զգեստներս փոխեմ : Օ ինքը ընտանիքովը հանդերձ դեռ մէկ ժամի մը չափ բռնեցի , ստիպելով որքիչ մը բերաննին անուշցընեն . ետքը ելաւ գնաց , ամենայն կերպով ապահովցընելով զիս տղուս վիճակին վըրայ :

Եւ իրաւցընէ դեռ հանդարտիկքուն կ'ըլլար , և յայտնի կ'երեւար որ առենին եղած իննամքները վտանգին առջեւը առեր էին , և յոյս կար առանց փորձանքի մը խալըսելու :

Հարկաւ փորձած պիտի ըլլանք որ մեծ վախսէ մը ետև յաջորդած մեծ ռախութիւնը թնչ աստիճանի ազդեցութիւն կ'ընէ . բնականապէս մարդուս սիրու կը շարժէ ու մտածել կուտայ , և կարծես թէ կը ստիպուի զգացած ուրախութեանը համեմատ աւելի աղէկութիւն մը ցուցընել : Ուստի երբ բոլորովին ինքիրմէս դուրս ելած՝ տղուս անկողնոյն քով , կը մտածէի այն բարերար ընտանեաց ու այն գեղեցիկ առածին վրայ թէ , ուր գիւտնիտն չկայ , հոն բնաւ իրաւունք ալ չկայ , յանկարծ մէյլ ալ բան մը միտքս ինկաւ . և ահա միտքս եկար դուն ու քու պզտիկ աղջիկդ , ու սկսայ ըսել ինքիրենս . թէ ահա իրենք ալ կարօտ են օգնութեան , ու ես փոխանակ օգնելու , իմ իրաւունքիս վրայ յամառեալ կեցեր եմ , որ ըստ ինքեան նոյնպէս կրնար մտածել այն օտարականն ալ , բայց ըսրաւ : Դէպէին նմանութիւնը սիրու շարժեց :

Ի՞նանկ սիրու տակնուվրայ եղեր էր , որ տեսակ տեսակ մտածութիւններով սկսայ տանջուիլ . և ինծի այնպէս մը կու գար որ եթէ ես այն կնկան վրայ չգթամ , Իստուած ալ իմ տղուս չողորմիր և զինքը չառողջացըներ : Ի՞յս մտա-

ծութիւնը ան աստիճանի վրաս տեղիք ըրաւ , որ առանց անձրեխն նայելու , վազեցի ախուը , հեծայ ձիուն վրայ , և գացի Վիւլչուղ փաստաբանին տունը , այն միջնոցին որ ինքը պառկելու կը պատրաստուէր : Երբօր ըսի թէ եկեր եմ թղթերը ետ առնելու , զիս խենթկարծեց . բայց ես առանց նայելու երբոր թղթերը առի , գոհ եղայ , ու սիրու հանդարտեցաւ : Հեծայ նորէն ձիուն վրայ , և շուտով քացընելով գարձայ Դան եկայ , և տեսայ որ Ատեփանուը հրեշտակի մը պէս կը քնանար :

Ի՞նացածը արգէն ձեզի ծանօթ է : Դուն փոխանակ մէկ անգամով պարտք հատուցանելու , տասը տարուան մէջ վճարեցիր , առուտուրդ ալ յաջող գընաց ու աղջիկդ մեծցաւ , անանկ որ հինգատաստաննիս հիմա իննամիութիւն պիտի փոխուի : Հիմա յուսամ որ իմացաք թէ ինչու համար ամէն անգամ որ ձեզի ըրած շնորհքս կը յիշէիք , գալոցի աշկերտի մը պէս կը կարմրնայի . ով որ առանց արժանեաց մէկը կը գովիլ , այն գովիլսար խօսողին քովը կը մնայ : Ի՞չաւասիկ ձեզի շմարիտը խոստովանեցայ , և ալ ամընալու բան չեմ ունենար . որովհետեւ , ինչպէս գիտէք , այդքարեգործութիւնը ընողը ես չեմ , հասպա այն ազնիւ մարդը զոր անկէ վերջը մէյմ'ալ չտեսայ . ինքը ինծի սորվեցուց թէ որն է բուն շմարիտ իրաւունքը , որով և ինծի վարժապետ եղաւ առանց գիտնալու :

### ՍՈՒՎԵՄԴՐ

Գումոյ քաղաքն ու իր լիձը :

Համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է Վասմոյ , զուարձալի հովտի մը մէջ , նոյնանուն լշին հարաւային արեմանտեան ծայրը կառուցուած , որ Վիւլանու հիւսիսային կողմը կ'իյսայ : Վալոր քաղաքը տարսալապատ է , և ամուր , աները վայելուէ , փաղոցները լայն ու մաքրաշէն : 42 ժողովրդապետական ե-